

ՆԻԿՈԼԱՅ ԲԵՐԴՅԱԵՎ

ՉԱՐԾ

Դոստոնեվկու^{*} սրեղծագործության մեջ չարի և ոճիրի թեման կապված է ազադության թեմայի հետ: Չարն անբացապեկի է առանց ազարտության: Չարն ի հայր է գալիս ազարտության ճանապարհներին: Առանց ազարտության հետ այդ կապի գոյություն չունի պարախանակավություն չարի համար: Առանց ազարտության՝ չարի համար պարախանակավու կլինիկ Ասպիված: Դոստոնեվկին առավել քան որևէ մեկը խորապես հասկացել է նաև, որ չարը ազարտության զավակն է: Բայց հասկացել է, որ առանց ազարտության չկա բարի: Բարին նույնպես ազարտության զավակն է: Մրա են են կապված կյանքի և մարդկային ճակարտագրի խորհուրդները: Ազարտությունն իրացիոնալ է և այդ պարզաբանվ այն կարող է արարել և՛ բարիք, և՛ չարիք: Սակայն մերժել ազարտությունն այն հիմնավորմամբ, թե այն կարող է ծնել չարիք, նշանակում է ավելի մեծ չարիք ծնել: Քանզի միայն ազարտությն գործված բարին է բարի, իսկ առաջնության գայթակղությունից ծնված հարկադրանքն ու սպրեկությունը հակաքրիստոնյան չարիք են: Այսինքն են բոլոր առեղծվածները, անդինոմիաներն ու գաղղրնիշները: Դոստոնեվկին ոչ միայն մեզ է կանգնեցնում այդ հանելուկների առջև, այլև մեծ ջանք է թափում դրանց լուծման համար: Դոստոնեվկին շապ յուրահապուկ, բացառիկ վերաբերմունք ունի չարի հանդեպ, որը կարող է շափերին գայթակղել: Եվ պես է մինչև վերջ հասկանալ, թե ինչպես է նա առաջադրել և լուծել չարի ինդիքը: Ազարտության ուղին վերածվում է ինքնակամության, ինքնակամությունը քանում չարիք, չարիքը՝ ոճիրի: Ոճիրի խնդիրը կենդրունական գեղ է զբաղեցնում Դոստոնեվկու սրեղծագործության մեջ: Նա ոչ միայն մարդաբան է, այլև յուրօրինակ քրեագետ: Մարդկային բնության հնարավորությունների և սահմանների ուսումնասիրությունը հանգեցնում է ոճիրի բնության ուսումնասիրությանը: Ոճրագործությամբ մարդն անցնում է այդ հնարավորություններն ու սահմանները: Այսինքնից՝ արդարացվոր հետաքրքրությունը ոճիրի հանդեպ: Ի՞նչ ճակարտագիր է ունենում թույլադրու սահմաններն անցնող մարդը, դրանց ինչպիսի՞ վերափոխում է վեղի ունենում նրա բնության մեջ: Դոստոնեվկին բացահայտում է ոճիրի օնթոլոգիական հերևսանքները: Եվ ահա պարզվում է, որ ինքնակամության վերածվող ազարտությունը քանում է չարիքի, չարիքը՝ ոճիրի, ոճիրը՝ ներքին անխուսափելիությամբ՝ պատճի: Պատճիը դարանամուք է լինում մարդուն հենց նրա սեփական բնության խորքում: Դոստոնեվկին ողջ կյանքում պայթարեց չարիքի հանդեպ արդարին վերաբերմունքի դեմ: Նրա վեպերն ու «Գրողի օրագրի» հոդվածները լի են քրեական դադարակարություններով:

* Ներկայացվող թարգմանությունը մեկ գույխն է Բերդյանի «Դոստոնեվկու աշխարհայեցողությունը» գործի (թրգմ.):

Ոճիրի և պագիծի նկազմամբ այդ փարօրինակ հետաքրքրությունը բացակրվում է նրանով, որ Դոստուսկու ողջ եղանոր աշխարհն ըմբռապանում էր հասարակական միջավայրում չարիքի և ոճիրի արդարին բացարձրության և այդ հիմնավորմամբ՝ պարօի ժխրման դեմ: Դոստուսկին ապելությամբ էր վերաբերվում այդ պողի-փիվ-եռումանիստական դեսությանը: Նա դրանում դեսունում էր ժխրումը մարդկային բնության խորի, մարդկային ոգու ազարության և դրա հետ կապված պարախանակվության: Եթե մարդն ընդամենը արդարին հասարակական միջավայրի արա-սիկ ուժիկեսն է, եթե նա պարախանակվու էակ չէ, ապա չկա մարդ և չկա Ասրված, չկա ազարություն, չկա չարիք և չկա բարիք: Մարդու այդպիսի սրբությունը, այդ-պիսի հրաժարումն իր անդրանկությունից Դոստուսկու մեջ զայրույթ է հարուցում: Նա չի կարող հանգիստ խոսել իր ժամանակաշրջանում այդքան դիրավերող այդ ուսունքի մասին: Նա պարբասպ է պաշտպանել ամենադաժան պարիժները, քա-նի որ դրանք համապատասխան են պարախանակվու և ազար էակների բնությանը: Չարը դրված է մարդկային բնության խորքում, նրա հոացինալ ազարության մեջ, ասրվածային բնությունից նրա անկման մեջ, այն ունի ներքին ակունք: Դաժան պարիժների կողմնակիցներն ավելի խորությամբ են նայում ոճիրի բնությանը և մարդու բնությանն առհասարակ, քան չարիքի հումանիստրական ժխրման կողմնա-կիցները: Հանուն մարդու արժանավորության, հանուն նրա ազարության Դոստուս-կին հաստարում է պարօի անխոստավելիությունը ցանկացած ոճիրի համար: Այդ է պահանջում ոչ թե արդարին օրենքը, այլ մարդու ազար խոճի ամենախոր եւթյու-նը: Մարդն ինքը չի կարող հաշվել այն բանի հետ, որ ինքը պարախանակվու չէ չարիքի և ոճիրի համար, որ նա ազար էակ չէ, հոգի չէ, այլ սոսկ արդացոլանքը հա-սարակական միջավայրի: Դոստուսկու զայրույթի ու դաժանության մեջ ձայն է ենցում՝ ըմբռսպացած հանուն մարդու արժանավորության և հանուն նրա անդրան-կության: Անպարշաճ է, որ պարախանակվու ազար էակն իրեն ազարի պարա-խանակվության լուծից՝ այն դենելով արդարին պայմանների վրա, և զգա իրեն որ-պես արդարին պայմանների խաղալիք: Դոստուսկու ամբողջ սրեղծագործությունը մերկացումն է մարդկային բնության նկազմամբ եղած այդ գրապարության: Չարը նշան է այն բանի, որ ներքին խորը կա մարդու մեջ: Չարը կապված է անհարակա-նության հետ, միայն անհարականությունն է կարող չարիք գործել և չարիքի համար հակուցել: Անդեմ ուժը չի կարող պարախանակվու լինել չարիքի համար, չի կարող նրա սկզբնաղբյուրը լինել: Չարի հանդեպ Դոստուսկու վերաբերմունքը կապված է անհարի հանդեպ նրա վերաբերմունքի հետ, նրա պերսոնալիզմի հետ: Անպարախ-խանակվու հումանիզմը մերժում է չարիքը, որովհետք ժխրում է անհարին: Դոս-տուսկին հանուն մարդու պայքարել է հումանիզմի դեմ: Եթե գոյություն ունի մարդը, մարդկային անհարականության խոր չափման մեջ, ուրեմն չարիքը ներքին աղբյուր ունի, այն չի կարող արդարին միջավայրի պարախական պայմանների արդյունք լի-նել: Եվ մարդու բարձրագույն արժանավորությանը, նրա ասրվածորդիությանը պարշաճում է մրածել, որ փառապանքի ճանապարհը քավում է ոճիրը և այրում չա-րիքը: Դոստուսկու մարդաբանության համար շար էական է այն միտքը, որ միայն

դառապանքի միջոցով է մարդը բարձրանում դեպի վեր: Տառապանքը խորության ցուցանիշ է:

Դոստոևսկու՝ չարի նկարմամբ վերաբերմունքը խորապես հակասական է: Եվ այդ վերաբերմունքի բարդությունը սփիզում է ոմանց կասկածել, թե այդ վերաբերմունքը քրիստոնեական է: Մի բան հասպար է: Դոստոևսկու վերաբերմունքը չարի նկարմամբ օրենսդրական վերաբերմունք չէ: Դոստոևսկին ցանկանում էր ճանաչել չարը և դրանում նա գնուպիկ է: Չարը չար է: Չարի բնությունը ներքին է, մնարաժիղկական և ոչ թե արդարին՝ սոցիալական: Մարդն իրեն ազար արարած պարասիստանարու է չարի համար: Չարը պեսքը է մերկացվի իր ոչնչության մեջ և պեսքը է այրվի: Եվ Դոստոևսկին կրակոր կերպով մերկացնում և այրում է չարը: Դա չարի հանդեպ իր ունեցած վերաբերմունքի մի կողմն է: Սակայն չարը միևնույն ժամանակ մարդու ճանապարհն է, նրա ողբերգական ճանապարհը, ազարի ճակարտագիրը, փորձառությունը, որը կարող է նաև հարսացնել մարդուն, բարձրացնել նրան ամենավերին ասդիմանին: Դոստոևսկու՝ չարի հանդեպ նրա վերաբերմունքի մեջ կա նաև մյուս կողմը՝ չարի իմանենք ընկալումը: Ազար որդիներն են այդպես ապրում չարը և ոչ թե սպրուկները: Չարի իմանենք փորձառությունը մերկացնում է նրա ոչնչությունը, այդ փորձառության մեջ այրվում է չարը, և մարդը գալիս է դեպի լույսը: Բայց այս ճշմարգությունը վիճակավոր է, այն գոյություն ունի իրավես ազարների և հոգեպես հասուների համար: Անշափահասներից այն պեսքը է ծածկված մնա: Եվ այդ պարճառով Դոստոևսկին կարող է վիճանգավոր գրող թվալ, նրան պեսքը է ընթերցել հոգևոր առումով ազարագրված մթնոլորդում: Եվ այնուամենայնիվ պեսքը է ընդունել, որ չկա գրող, որն այդպես հզոր կերպով պայքարած լինի չարի և խավարի դեմ, ինչպես Դոստոևսկին: Կարեխիզիսի օրենսդրական բարոյականությունը չէր կարող պարախան լինել նրա հերոսների դառապանքներին, ովքեր ուրի են դրել չարի ճանապարհին: Չարն արդարնապես չի պարֆում, այլ ունի ներքին անկասելի հերեւանքներ: Ոճիրի համար օրենքի պափիթը հանցագործի ներքին ճակարտագիրն է միայն: Ամբողջ արդարինն ընդամենը ներքինի նշանակորումն է: Խողի խայթն ավելի սարսափելի է մարդու համար, քան պեղական օրենքի արդարին պափիթը: Եվ մարդը, խողի խայթից խոցված, սպասում է պափիթ՝ իրեն իր դառապանքների թեթևացման: «Ենքության օրենքը՝ այդ «սառը հրեշը», անհամաշափելի է մարդկային հոգու հետք: Միդյա Կարամազովի հերաքնության ու դարպավարության մեջ Դոստոևսկին մերկացնում է պեղական օրենքի սխալը: Դոստոևսկու համար մարդկային հոգին ավելի մեծ նշանակություն ունի, քան աշխարհի բոլոր թագավորությունները: Այսինքն նա խորապես քրիստոնյա է: Սակայն հոգին ինքն է փնտրում պեղական սուրբ, ինքն է իրեն դնում նրա հարվածների դասը: Պափիթը նրա ներքին ճանապարհի մի պահն է:

Միայն սպրուկը կամ անշափահասը կարող է հասկանալ Դոստոևսկու թեզիսը չարի վերաբերյալ այնպես, որպես թե պեսքը է գնալ չարի ճանապարհով նոր փորձառություն սրանալու և հարսարանալու համար: Դոստոևսկու սկզբունքների վրա չի կարենի կառուցել չարի եվորուցին գետսությունը, ըստ որի՝ չարն ընդամենը մի պահ է:

բարու Եվլուցիայի մեջ: Չափ թեռտֆների կողմից պաշտպանվող այդպիսի Եվլուցիան լավագրեսությունը կապարելապես հակառիք է Դուստրուսկու ողբերգական ոգուն: Ամենաքիչը նա է եղել Եվլուցիանիսդ, ում համար չարք բարու պակաս է կամ է բարու զարգացման փուլ: Չարք նրա համար չարք է: Չարք պետք է այրվի դժոխքի կրակում: Եվ նա չարն անցկացնում է դժոխքի կրակի միջով: Նարավոր չէ որևէ երեխայական խաղ կամ խորամանկություն թույլ դրա չարք հանդիսաւ: Անմորություն է կարծել, թե մարդ կարող է գիրակցաբար գնալ չարք ճանապարհով, որպեսզի, որքան հնարավոր է, դրանից ավելի շատ բավականություն ստանա, իսկ ենքու ավելի շատ առաջանա բարու մեջ: Դա գիրակցության կապարելապես անարժեք վիճակ է: Այդպիսի փաստարկման մեջ չկա ներքին լրջություն: Թող որ չարք ողբերգական փորձառությունը հարստացնի մարդու եղանուր աշխարհը, սրի նրա գիրելիքը: Թող որ վերադարձ չինի չարք այդ փորձառությանը նախորդող ավելի փարրական վիճակի: Բայց երբ նա, ով գնում է չարք ճանապարհով, ապրում չարք փորձառությունը, սկսում է մրգածել, որ չարն իրեն հարստացնում է, որ այն ընդամենը բարու մի պահն է, մի պահն է նրա բարձրացման, այդպիսին ավելի վար է ընկնում, բարոյալվում ու կործանվում, խափանում հարստանալու և բարձրանալու իր ճանապարհը: Այդպիսի մարդու ոչինչ չի կարող ստվորել չարք փորձառությունից, չի կարող այլևս վեր բարձրանալ: Միայն չարք մերկացումը, միայն մեծ փառապանքն է կարող չարից հանել մարդուն դեպի վեր: Ինքնավարակությունը չարք մեջ՝ կործանում է: Եվ Դուստրուսկին ցույց է տալիս, թե հոգին չարից ինչ փառապանքի է ներարկվում և ինչպես է ինքն իր մեջ մերկացնում չարք: Չարք մարդու ողբերգական ուղին է, ճակարագիրը, մարդկային ազագության փորձառությունը: Սակայն չարք բարու Եվլուցիայի մեջ անհրաժեշտ պահ չէ: Չարք հակասական է: Իսկ չարք լավագրեսական Եվլուցիան ըմբռնումն այդ անփինումիայի ռացիոնալ վերացումն է: Կարելի է հարստանալ չարք փորձառությունից, հասնել ավելի սուր գիրակցության, բայց դրա համար պետք է անցնել փառապանքի միջով, զգայ կործանման սարսափը, մերկացնել չարք, ներկել այն դժոխքի կրակի մեջ, քավել սեփական մեղքը: Չարք կապված է փառապանքի հետ և պետք է փանի քավության: Դուստրուսկին հավաքում է փառապանքի քավող և վերածնող ուժին: Նրա համար կյանքը նախնառաջ մեղքի քավություն է փառապանքի միջոցով: Այդ պարմառով է ազագությունն անխուսափելիորեն կապված է քավության հետ: Ազագությունն է առաջնորդել մարդուն դեպի չարք ճանապարհը: Չարն ազագության փորձությունն էր, ուստի ինքն էլ պետք է քավության փաներ: Ազագությամբ ծնված չարք մեջ մեռնում է ազագությունը, վերածվում իր հակառակությանը: Քավությունը վերանորոգում է մարդու ազագությունը, վերադարձնում նրա ազագությունը: Այդ պարմառով էլ քրիստոնությունը կապված է և ազագություն: Դուստրուսկին իր բոլոր վեպերում մարդուն անցկացնում է այս եղանուր ընթացքի միջով, ազագության, չարք ու քավության միջով: Բայց Զոսհման և Այոշան նրա կողմից պատկերված են իբրև մարդիկ, որոնք ճանաչել են չարք և հասել բարձր հոգիվիճակի: Այոշայի մեջ կարամազովյան փարերը կա, այն նկարում են նրա մեջ և եղբայրը՝ Խվանը, և՝ Գրոշենկան: Նա ինքն անձամբ զգում է այն իր մեջ: Ըստ

Դոստոնեվակու միքահեղացման՝ Ալյոշան պիտի լիներ մարդ, ով անցել է ազագության փորձության միջով։ Այդպես է հասկանում Դոստոնեվակին մարդու ճակարտագիրը։ Ոճիրի խնդիրը խնդիրն է այն բանի, թե արդյո՞ք ամեն ինչ թույլափրելի է։ Այս թեման միշտ բանցել է Դոստոնեվակուն, այն միշտ նրա առջև է ծառացել նորանոր ձևերով։ Այդ թեմայով են գրված «Ոճիր և պատիժ»-ը, ինչպես նաև, նշանակալից չափով, «Դեեր»-ը և «Կարամազով եղբայրներ»-ը։ Այս թեման դառնում է մարդկային ազագության փորձությունը։ Երբ մարդը գնաց ազագության ճանապարհով, նրա առջև հարց դրվեց, թե արդյո՞ք նրա բնության համար գյություն ունեն բարոյական սահմաններ, արդյո՞ք ամեն ինչի կարող է նա հանդգնել։ Ինքնակամության վերածվող ազագությունն այլև չի ցանկանում որևէ պրություն ու սահմանափակում ճանաչել։ Եթե Աստված չկա, եթե մարդն ինքն ասպակա է, որեմն ամեն ինչ թույլափրելի է։ Եվ ահա մարդը փորձում է իր ուժերը, իր գորությունը, իր կոչումը մարդ-ասպակա դառնալու։ Մարդը բռնվում է ինչ-որ «գաղափարով», և այդ բռնվածության մեջ արդեն սկսում է մարել նրա ազագությունը, նա սփրուկ է դառնում ինչ-որ կողմնակի ուժի։ Այդ գործընթացը հանճարենդրեն է պարզերվել Դոստոնեվակու կողմից։ Նա, ով իր ինքնակամության մեջ իր ազագության սահմանները չգիտի, կորցնում է ազագությունը, բռնվում մի «գաղափարով», որը նրան սպրկացնում է։ Այդպիսին է Ռասկոլնիկովը։ Նա բնավ ազագ մարդու փապակորություն չի թողնում։ Նա մոլագար է, կենծ «գաղափարով» բռնված։ Նա ցոնի բարոյական ինքնավարությունը փրկում է ինքնամաքրմամբ և ինքնազարդմամբ։ Մըն է Ռասկոլնիկովի «գաղափարը»։ Ձե՛ որ Դոստոնեվակու բոլոր կերպարներն ունեն իրենց «գաղափարները»։ Ռասկոլնիկովը փորձում է սեփական բնության սահմանները, մարդկային բնությունը՝ առհասարակ։ Նա իրեն համարում է մարդկության ընդույչական դասի ներկայացուցիչ, ոչ թե հասարակ մարդկանց, այլ հիանալի մարդկանց՝ կոչված մարդկությանը բարերարություն անելու։ Նա միաձում է, թե ամեն ինչ կարելի է, և ուզում է փորձել իր հզրությունը։ Եվ ահա բարոյական խնդիրը, որը կանգնած է նման գիրակցություն ունեցող մարդու առջև, Դոստոնեվակու կողմից բացահայպվում է բարրական գլուխություններով։ Կարմ՞ է արդյոք արդարաւոյր մարդը՝ կոչված ծառայելու մարդկությանը, սպանել ամենասպոր և ամենաայլանդակ մարդկային արարածին, զգվելի պատավին՝ վաշխառուին, որը չարից բացի ոչինչ չի պատճառում մարդկանց։ Նա անում է այդ, որպեսզի դրանով իր համար ուղի բանա ապագայում մարդկությանը բարերարություն անելու։ Արդյո՞ք թույլափրելի է դա։ Եվ ահա ապշեցուցիչ ուժով բացահայպվում է «Ոճիր և պատիժ»-ի մեջ, որ դա թույլափրելի չէ, որ այդպիսի մարդը հոգեպես սպանում է իրեն։ Այնպես իմանենքուն ապրած փորձառության մեջ ցույց է դրվում, որ ամեն ինչ թույլափրելի չէ, որովհետև մարդկային բնությունը սպիտելված է Աստծու պարկերով ու նմանությամբ, և այդ պարճառով յուրաքանչյուր մարդ ունի բացարձակ նշանակություն։ Նոյնիսկ մարդկանցից ամենավերջինի, մարդկանցից ամենավենասակարի ինքնակամ սպանությունը թույլափրելի չէ մարդու հոգևոր բնությանը։ Երբ մարդն իր ինքնակամությամբ ոչնչանում է մի ուրիշ մարդու, կորցնում է իր մարդկային կերպարը, նրա անհա-

դականությունը սկսում է բարոյալքել: Որևէ «գաղափար», որևէ «վեհ» նպագակ չի կարող արդարացնել ոճրային վերաբերմունքը մերձավորներից ամենավերջինի նկարմամբ: «Մերձավորը» թանկ է «հեռավորից», ցանկացած մարդկային կյանք, ցանկացած մարդկային եղան ավելին արժեն, քան գալիք մարդկությանը բարերարություն անելը, քան վերացական «զաղափարը»: Այդպիսին է քրիստոնեական գիտակցությունը: Եվ դա բացահայտում է Հոսպոլսկին: Նա, ով իրեն Նապոլեոն էր երևակայում, մեծ մարդ, մարդ-աստված, անցնելով ասրբածանման մարդկային բնությանը թույլ դրված սահմանները, խորապես ընկնում է և համոզվում, որ ինքը գերմարդ չէ, այլ անզոր, սպոր, երերուն արարած: Ռասկոլնիկովը գիտակցում է իր բացարձակ անզորությունը, իր ոչնչությունը: Իր ազագության և ուժի հնարավորությունների փորձությունը հանգեցնում է սարսափելի արդյունքների: Ռասկոլնիկովը ողորմելի ու չարանենգ պառավի ենք ոչնչացնում է ինքն իրեն: Օճիրից ենքո, որն իսկական փորձարկում էր, նա կորցնում է իր ազագությունը և ճգմվում իր անզորությունից: Նա այլև չունի հապարդ գիտակցություն: Նա հասկանում է, որ ենչը է մարդ սպանելը, որ այդ փորձարկումն այդքան է դժվար չէ, բայց նաև, որ դա չի դաշտում ուժ, որ դա գրկում է մարդուն եղանուր ուժից: Ոչ մի «մեծ», «անսովոր», իր նշանակությամբ համաշխարհային բան չարձանագրվեց նրանից, որ Ռասկոլնիկովը սպանեց վաշխառուին. նա ճնշվեց վետի ունեցածի ոչնչությունից: Հավիտենական օրենքն իր իրավունքի մեջ մրավ, և նա վերջինիս իշխանության դակա ընկապ: Հիսուս Քրիստոսը չեկավ Օրենքը խախտելու, այլ լրացնելու: Եվ ազագությունը, որը Նոր Ուխտը է բերում իր ենք, չի ըմբռագանում Դին Ուխտի դեմ, այլ ընդամենը ավելի բարձր աշխարհ է բացում: Եվ Ռասկոլնիկովը պիեք է ընկնի եինկարակարանյան ամիսակար օրենքի ներգործության դրակ: Այդպես չեն վարվել նրանք, ովքեր իրոք մեծ և հանճարեղ են եղել, մեծ գործեր կատարել համայն մարդկության համար: Նրանք իրենց չեն համարել գերմարդ, ում ամեն ինչ թույլագրելի է, նրանք անձնագորհար ծառայել են գերմարդկայինին և միայն այդ պարբառով են կարողացել շար դրակ մարդկայինին: Ռասկոլնիկովն ամենից առաջ երկարված, ոեֆեկտիվացված մարդ է, նրա ազագությունն արդեն պարբառ է ներքին եինանդությամբ: Այդպիսին չեն իսկական մեծ մարդիկ, նրանց մեջ ամրողականություն կա: Հոսպոլսկին մերկացնում է դեպի գերմարդը հավակնության կեղծիքը: Պարզվում է, որ գերմարդու կեղծ գաղափարը կործանում է մարդուն, որ անսահման ուժի հանդեպ հավակնությունն ի հայր է բերում մարդու թուլությունն ու դրաբարությունը: Բոլոր այդ ժամանակակից ծգությունները դեպի գերմարդկային ուժը ոչինչ են և թշվառ, դրանք ավարդվում են մարդու՝ անմարդկային թուլությամբ անկումով: Եվ բացահայտվում է, որ հավիտենական է բարոյական ու կրոնական խճի բնությունը: Խոդի դանջանքը մերկացնում է ոչ միայն ոճիքը, այլև մարդու դրաբարությունը ուժի հանդեպ ունեցած իր կեղծ հավակնության մեջ: Ռասկոլնիկովի խճի դրանջանքը ոչ միայն բացահայտվում է, որ նա անցել է թույլ դրվածի սահմանները, այլև մերկացնում է նրա թուլությունն ու ոչնչությունը:

Ուսկողնեկովի թեման արդեն հումանիզմի ճգնաժամն է ցուցանում. Վերջ հումանիստական բարոյականությանը, ինքնահասպատման պարբառով մարդու անկանությունը: Գերմարդու և գերմարդկության, մարդու բարձր բարոյականության մասին երազի ծնունդը ցույց է փալիս, որ հումանիզմը սպառվել-վերջացել է: Ուսկողնեկովի համար այլևս գոյություն չունի հումանիստություն. Նրա վերաբերմունքը մերձավորի հանդեպ դաժան է և անողոք: Մարդը՝ ապրող, որոշակիորեն փառապղոյ մարդկային է ավոր, պեսոք է զոհաբերվի գերմարդկային «գաղափարին»: Նաևուն «հեռավորի», անմարդկային «հեռավորի»՝ ըստ աներաժեշտության ցանկացած ծնուզ կարելի է վարվել «մերձավորի» հետ, մարդու հետ: Դուսպունսկին անձամբ դաշտանում է «մերձավորի» հանդեպ սիրո կրոնը և մերկացնում սիրո կրոնի կեղծիքը «հեռավորի», անմարդկայինի, գերմարդկայինի հանդեպ: Կա «հեռավոր», որը պարզվիրեց սիրել «մերձավորին»: Դա Աստված է: Սակայն Աստծու գաղափարը միակ գերմարդկային գաղափարն է, որը չի կործանում մարդուն, չի վերածում նրան հասարակ միջոցի կամ գործիքի: Աստված հայդնում է Իրեն Իր Որդու միջոցով: Նրա Որդին կապարյալ Աստված և կապարյալ մարդ է, Աստվածամարդ, Ում մնջ կապարեկապես միավորված են աստվածայինն ու մարդկայինը: Ցանկացած այլ գերմարդկային գաղափար կործանում է մարդուն, վերածում նրան միջոցի և գործիքի: Մարդ-աստծու գաղափարն իր հետք մարդու մահն է քերում: Դա կարելի է փեսնել Նիշշենի օրինակով: Նմանապես մահացու է մարդկության համար Մարքսի ոչ մարդկային համայնական գաղափարը՝ սոցիալիզմի կրոնի մեջ: Դուսպունսկին ուսումնասիրում է մարդու՝ մարդաստվածության գաղափարով մոլագարության ճակատագրական հետքանաքներն իր դրաբեր ծների մեջ՝ անհարական և համայնական: Այսինք մարդկության թագավորությունն ավարտվում է, այսինք այլևս չեն խնայի մարդուն: Մարդկայնությունը դեռևս արդացողանքն էր մարդու մասին գոյություն ունեցող քիչսպոնեական ճշմարդկության: Այդ ճշմարդկության վերջնական փոփոխությունը չեղյալ է համարում հումանիստական վերաբերմունքը մարդու հանդեպ: Նաևուն գերմարդու փառքի, հանուն գալիք երշանկության, հեռավոր մարդկության, հանուն համաշխարհային հեղափոխության, հանուն մեջի անսահման ազարդության կամ բոլորի անսահման հավասարության կարենի է փանջել կամ մահացնել ցանկացած մարդու, մարդկային ցանկացած քանակություն, ցանկացած մարդու վերածել հասարակ միջոցի՝ հանուն մեծ «գաղափարի», մեծ նպարակի: Ամեն ինչ թույլագրելի է հանուն գերմարդու (ծայրահետ ինդիվիդուալիզմ), անսահման ազարդության կամ է հանուն մարդկության (ծայրահետ կոլեկտիվիզմ) անսահման հավասարության: Մարդկային ինքնակամությանն իրավունք է դրված ըստ իրեն արժանութեալ մարդկանց լյանքը և փնօրինելու այն: Ըստ այս Աստծուն չի պարկանում մարդկային լյանքը, և Աստծուն չի պարկանում մարդկանց վերջին դարսարանը: Դա իր վրա է վերցնում իրեն գերմարդկային «գաղափարի» դրեր երևակայող մարդը: Եվ նրա դարսարանն անողորում է, անսապված և անմարդկային: Մարդկային այդ կամայականության ճակատագրական ճանապարհները Դուսպունսկին ուսումնասիրում է անհարական ու համայնական ծներով և մինչև յորբերը մերկացնում դրանց գայթակղիչ կեղծիքը:

Ուսակղնիկովն այդպիսի կեղծ գաղափարներից բռնված մեկն է: Նա ինքն իր կամայականությամբ և քմահաճությամբ է լուծում այն հարցը, թե կարելի է արդյոք հանուն սելիական «գաղափարի» սպանել մարդկանցից վերջինին: Բայց այդ հարցի լուծումը մը մարդուն չի պարկվածում, այլ Ասդուն: Ասրված միակ վսեմ «գաղափարն» է: Եվ նա, ով այդ հարցի լուծումն պարագայում չի խոնարիկում վսեմ գաղափարի առօս, կործանում է մերժավորներին և իրեն: Դրանում է «Ոճիրի և պարի»-ի իմաստը: Մարդկային կամայականությունը ոճիրի փանող ուղիները Դոստուսկին շարունակաբար և ավելի խորությամբ «Դեսրի» մեջ է ուսումնասիրում: Այնպես բացահայտված են մոլագարության ճակարտագրական հերթանքները և անասպածյան ինդիվիդուալիստական և անասպածյան համայնական գաղափարները: Դյուք Վերխովենսկին կեղծ գաղափարի բռնվածությունից կորցնում է մարդկային պարկերը: Նրա մեջ մարդու կործանումը, Ռասկոլնիկովի համամարտությամբ, շատ հեռու է գնում: Դյուք Վերխովենսկին ամեն ինչի ընդունակ է, նա գիտում է, որ հանուն իր «գաղափարի» ամեն ինչ թույլափրելի է: Նրա համար այլևս գրյություն չունի մարդը, և ինքն այլևս մարդ չէ: Մենք արդեն մարդկային թագավորությունից դուրս ենք գալիս ինչ-որ սահմուկուն, անմարդկային դարձերի մեջ: «Նողափոխական սոցիալիզմի մոլագարությունը, վերջնական արդյունքում, անասպածյան գաղափարից անմարդկայնության է դրանում: Տեղի է ունենում մարդկային բնության բարոյական ապուշացում, կորցնում է չարի ու բարու ամեն դեսակ չափանիշ: Արյամբ և սպանությամբ հագեցած սահմուկեցուիչ միանորդ է ծալավորվում: Ծալուվի սպանությունը ցնցիչ դպավորություն է սպիտում: «Դեսրում» բացահայտվող պարկերի մեջ ինչ-որ կանխագուշակություն, մարգարենություն կա: Դոստուսկին առաջինը ճանաչեց հայրին գաղափարների անհուսափելի հերթանքները: Նա ավելի խորությամբ էր դեմում, քան Վլ. Սոլրվովը, ով սրախոսեց ոռւսական նիկիլիսպների հասցեին՝ նրանց վերագրելով հերկյալ բանաձնը. «Մարդն առաջացել է կապիկից, այդ պարճառով պիտի սիրենք միմյանց»: Աչ, եթե մարդն Ասդուն պարկերն ու նմանությունը չէ, այլ կապիկինը, միմյանց չեն սիրի, այլ կոչնչացնեն, ամեն դեսակ սպանություն և դամանություն թույլ կրան իրենց: Այդ դեսքում ամեն ինչ թույլափրելի է: Դոստուսկին նրանց «գաղափարի», վերջնական նպարակի, որը սկզբում վսեմ ու զայթակողիք էր ներկայանում, վարդասերումն ու սնանկությունն է ցույց դայիս: «Գաղափարը» ինքնին այլանդակ է, անիմասդ ու անմարդկային, նրանում ազագությունն անսահման բռնադիրության է անցնում, հավասարությունը՝ սարսափելի անհավասարության, մարդու ասպիվածացումը՝ մարդկային բնության ոչնչացման: Վ. Պ. Վերխովենսկու՝ ամենաայլանդակ կերպարներից մեկի մարդկային խիճը, որը դեռևս Ռասկոլնիկովի մոտ կար, արդեն կարարելապես կործանված է: Նա այլևս ի վհճակի չէ քավության, դիմակարությունը չափազանց հեռու է գնացել: Այդ պարճառով նա Դոստուսկու այն կերպարների թվին է պարկանում, որոնք չունեն հերքազ մարդկային ճակարտագիր, որոնք մարդկային թագավորությունից ընկնում են անզության մեջ: Նա ծողություն է: Այդափար են Սվիդրիգայլովը, Ֆյուրոր Պավլովիչ Կարամազովը, Սմերդյակովը՝ հավիտենական ամուսինը: Մինչդեռ Ռասկոլնիկովը,

Սպավրոգինը, Կիրիլովը, Վերսիլովը, Իվան Կարամազովը ունեն ապագա. թեկուզ էմպիրիկորեն նրանք կործանվել են, նրանք դեռևս ունեն մարդկային ճակարտագիր:

Դուստուսկին ուսումնավրում և բացահայտում է խղճի փանջանքն ու զդումը այնպիսի խորության մեջ, որում դրանք մինչ այդ դեսանելի չէին. նա հայրնաբերում է ոճիրի փանող կամքը մարդու ամենախոր շերպերում, մարդու գաղղինի խորհրդածություններում: Խղճի փանջանքն այրում է մարդկային հոգին նաև այն ժամանակ, երբ մարդու որևէ դեսանելի ոճիր չի կարարել: Մարդը զդում է, մերկացնում իրեն, թեպետ ոճիրի փանող կամքը որևէ գործողություն չի ձեռնարկել: Ոչ միայն պերական օրենքը, այլև հասարակական կարծիքի բարոյական դարպասքանը չի հասնում մարդկային ոճրագործության ամենախոր կերին: Մարդն ինքն իր մասին ավելի սարսափելի բաներ գիտի և իրեն ավելի խիստ պարիժների է արժանի համարում: Մարդկային խիղճն ավելի անողորմ է, քան պերակության սառը օրենքը, այն ավելին է պահանջում մարդուց: Մենք մեր մերձավորներին միայն այն ժամանակ չենք սպանում, երբ վերջ ենք փալիս նրանց ֆիզիկական լյանքին երազենով կամ սառը զենքով: Ոչ միշտ մարդկային գիտակցությանը հասնող գաղփնի խորհրդածումը՝ ուղղված մեր մերձավորի գոյության ժխրմանը, արդին իսկ սպանություն է հոգում, և մարդը պարախանարու է դրա համար: Ցանկացած ապելություն արդեն իսկ սպանություն է: Եվ մենք բոլորս մարդասպաններ ու ոճրագործներ ենք, թեկուզ պերական օրենքն ու հասարակական կարծիքն այդ վերաբերմունքի մեջ մեզ համարել են անբարի և անարժան որևէ պարզի: Բայց որքան մահացու հոսանքներ ենք բաց թռնում մենք ենք հոգու խորքից, ենթագիրակցականի ոլորդից, որքան հաճախ է մեր կամքն ուղղված մեր մերձավորների լյանքի սորորացմանն ու ոչնչացմանը: Մեզանից շաբերն իրենց հոգու գաղփնարաններում մահ են ցանկացել իրենց մերձավորներին: Ոճիրը սկսվում է այդ գաղփնի խորհրդածություններով ու ցանկություններով: Եվ Դուստուսկին արդասովոր կերպով խորասուզվում է և խիստ նրբացնում խղճի աշխարանքը, որը մերկացնում է ամեն դեսակ պերական և մարդկային դարպասքանից խուսափող ոճիրը: Իվան Կարամազովը չի սպանել իր եղբար՝ Ֆյորոր Պավլովիչին: Նրան սպանել է Մերդյակովը: Սակայն Իվան Կարամազովը փանջում է իրեն հայրասպանության ոճիրի համար, խղճի փանջանքը նրան խելագարության է հասցնում: Նա հասնում է անհարականության երկարման ամենավերջին սահմանին: Ներքին չարը հայդնում է նրան իրեն նրա մեկ ուրիշ «ես» և փանջում է: Իր գաղփնի խորհրդածություններում, ենթագիրակցական ոլորդում, Իվանը ցանկացել է իր եղբար՝ Ֆյորոր Պավլովիչի՝ վար ու այլանդակ մարդու մահը: Չե՞ որ նա ամբողջ ժամանակ խոսում էր այն մասին, որ ամեն ինչ «քույլապրելի» է: Նա գայթակղեց Մերդյակովին, պաշտպանեց նրա ոճրագործ կամքը, ամրապնեց այն: Նա հայրասպանության հոգևոր մեղավորն է, Մերդյակովն իր երկրորդ, սորոր «եսն» է: Ոչ պերական, ոչ հասարակական կարծիքի դարպասքանը ոչնչում չի կասկածում և չի մեղադրում Իվանին, չի հասնում այդ խորությանը: Բայց ինքն անձամբ ապրում է խղճի փանջանքը, որից դժոխքի կրակներում այրվում է նրա հոգին, մրագնում միտքը: Կեղծ, անասրվածյան «գաղափարները» հասցրին նրան հայրա-

սպանությունն արդարացնող գաղտնի խորհրդածումների: Եվ եթե նա մարդ է, որը կարող է դեռևս իր ճակարագիրն ունենալ, որեմն պեսք է անցնի այրող ապաշ-խարության միջով, խելազարության միջով: Չէ՞ որ Միջյա Կարամազովն է չեր սպանել իր հորը և զոհն էր դարձել մարդկային անարդար դարբասարանի: Բայց նա ասել էր. «Ինչո՞ւ է ապրում այդպիսի մարդը»: Եվ դրանով նա հայրասպանություն կափարեց իր հոգու խորքում: Սառը օրենքի անարդար ու ոչ արժանի պատրիժն ինքն ընդունում է իրեւ հապուցում իր մերժի: «Կարամազով եղբայրներ»-ի հայրասպա-նության ողջ հոգեբանությունը շար խոր, գաղտնի խորհրդաբանական իմսափ ունի: Մարդու անապրվածյան ինքնակամության ճանապարհը պիտի հայրասպանության դասին, հայրության ժիշտման: Չէ՞ որ հեղափոխությունը միշտ է հայրասպանություն է: Իվան Կարամազովի և նրա մյուս՝ սպոր «եսի»՝ Մմերդյակովի միշտ եղող հարաբե-րությունների պարկերումը Դոսդոնսկու ամենահաճարեն էջերից է: Ինքնակա-մության ճանապարհը՝ գերմարդկայինի առջև երկյուղածությունը մերժող ուղին, պեսք է հանգեցնի նրան, որ Մմերդյակովի կերպարը բարձրանա: Մմերդյակովը հենց մարդուն դարանակարող սարսափելի պատրիժն է: Մմերդյակովի սարսափելի, այլանդակ ծաղրանկարը կանգնած է մարդասրվածության դանող այդ ծգրումների վերջում: Մմերդյակովը կիալիքի այդ ճանապարհին: Իսկ Իվանը պեսք է ինելազար-վի: Գաղտնի խորհրդածություններում ոճիրի նման մերկացումը, թեև դա ընդամենը թողովություն էր, մենք դեսնում ենք Սրբավորգինի կոնց՝ Խորունոնմկայի՝ մահվան համեթա ունեցած վերաբերմունքի մեջ: Ֆեղկա Կապործիկը մեղավոր է Խորունոնմ-կայի մահվան համար, իրեն Սրբավորգինց գայթակղված և իբրև նրա գործակալն է համարում: Սրբավորգինը նույնական գգում է իր մեղքը: Անա թե ինչ խորության մեջ է դմում Դոսդոնսկին չարիքի ու ոճիրի խնդիրը:

«Առանց «գերագույն գաղափարի» ցի կարող գոյագրեն ոչ մարդը, ոչ ազգը: Իսկ գերագույն գաղափարը երկրի վրա ընդամենը մեկն է, և հափկապես՝ գաղափարը մարդկային հոգու անմահության մասին, քանզի կյանքի մյուս բոլոր «գերագույն գա-ղափարները» միմիայն նրանից են բիտում»: «Անմահության մասին գաղափարի կորսորի դեպքում ինքնասպանությունը կափարյալ և անխուսափելի անհրաժեշ-տություն է իր մակարդակով անսաւնների համեմափությամբ մի փոքր բարձրացած յուրաքանչյուր մարդու համար»: «Անմահության մասին գաղափարն ինքնին կյանք է, նա կենդանի կյանքն է, վերջնական բանաձևն ու զյուսավոր աղբյուրը ճշմարդության և ճշմարիկ գիտակցություն՝ մարդկության համար»: Այդպիս է գրում Դոսդոնս-կին անմահության մասին «Գրողի օրագրում»: Նրա կենտրոնական միտքն այն է, որ եթե չկա անմահություն, որեմն ամեն ինչ թույլագրելի է: Նրա համար չարիքի ու ոճիրի խնդիրը կապված է անմահության խնդիրի հետ: Դոսդոնսկու միտքը չի նշա-նակում, որ նա ունեցել է չարիք ու ոճիրի խնդիրի դարրականորեն պարզեցված և գործնական հարցադրություն: Նա չի ցանկանում դրանով ասել, որ չարիք և ոճիրի համար մարդը հավիկենական կյանքում պիտի պատժիլի, իսկ բարու համար՝ վարձադրվի: Այդպիսի պարզունակ երկնային օգտագաշությունը օփար է նրան: Դոսդոնսկին կամենում է ասել, որ ցանկացած մարդ և նրա կյանքը միայն այն դեպքում բացար-

ձակ նշանակություն ունեն, եթե նա անմահ էակ է, և չի թույլադրվում նրա հետք վերաբերվել իրը միջոցի հետ՝ ինչ-որ գաղափարների կամ հետքաքրքրությունների համար: Մարդու անմահության ժխտումը նրա համար հավասարազոր է մարդու ժխտմանը: Մարդը կամ հավիրենական ճակարտագիր ունեցող անմահ հոգի է, կամ անցողիկ էմպիրիկ ֆենոմեն, բնական և սոցիալական միջավայրի պահիվ արդյունք: Բայց երկրորդ դեպքում մարդը չունի բացարձակ արժեք: Գոյություն չունեն չարիք և ոճիք: Դոստուսկին պաշտպանում է մարդու անմահ հոգին: Անմահ հոգին, որը միևնույն ժամանակ նշանակում է նաև ազար հոգի, ունի հավիրենական, բացարձակ արժեք: Սակայն նաև պատրասխանապու հոգի է: Ներքին չարի գոյության և ոճիքի համար պատրասխանադվության ընդունումը ցույց է դայիս մարդկային անհարականության իրական կեցության ընդունումը: Չարը կապված է անհարական կեցության հետ, մարդկային եսասիրության հետ: Բայց անհարական կեցությունը անմահ կեցություն է: Անմահ անհարական կեցության կործանումը չարիք է: անմահ անհարական կեցության հասպարում՝ բարիք: Անմահության ժխտումը ժխտումն է այն իրողության, որ գոյություն ունեն չարն ու բարին: Ամեն ինչ թույլադրելի է, եթե մարդին անմահ և ազար անհարական կեցություն չէ: Այդ ժամանակ մարդը չունի բացարձակ արժեք: Այդ դեպքում մարդը պատրասխանապու չէ չարի համար: Դոստուսկու բարոյական աշխարհընկալման կենդրուում կանգնած է ցանկացած մարդկային էակի բացարձակ նշանակության ընդունումը: Մարդկանցից ամենավերջինի կյանքն ու ճակարտագիրը բացարձակ նշանակություն ունեն հավիրենության համար: Դա հավիրենական կյանք է և հավիրենական ճակարտագիրը: Եվ այդ պատճառով չի կարելի առանց պարզի ճգնել որևէ մարդկային էակի: Ցուրաքանչյուր մարդկային էակի մեջ պեսքը է հարգել Ասքծու պարկերն ու նմանությունը: Անզամ ամենաընկած մարդկային էակը պահպանում է Ասքծու պարկերն ու նմանությունը: Մրանում է Դոստուսկու բարոյական պաթօսը: Ոչ միայն «հեռավոր» գերազույն «գաղափարը», ոչ միայն «արդասովոր» մարդիկ, ինչպես Ռասկովնիկովը, Սփավորգինը, Իվան Կարամագրովը, բացարձակ նշանակություն ունեն, այլև «մերձավորը». Մարմելարովը, Լեբյաջկինը, Սնիգիրյովը կամ զգվելի պառավ վաշխառոն նոյնապես բացարձակ նշանակություն ունեն: Մարդը, որը սպանում է մեկ ուրիշ մարդու, ինքն իրեն է սպանում, անմահությունն ու հավիրենությունն է ժխտում իր և ուրիշի մեջ: Այսպիսին է Դոստուսկու բարոյական դիմակնիկիկան, անժխտելի և քրիստոնեական: Պարզի օգդապաշտական վախը չէ, որ պեսքը է եփ պահի ոճրից և սպանությունից, այլ մարդու սեփական անմահ բնությունը, որը ոճիրով և սպանությամբ ժխտվում է: Մարդկային խիճն այդ անմահ բնության արբահայպությունն է:

Դոստուսկին երկակի վերաբերմունք ունի դառնապահի հանդեպ: Եվ այդ երկակիությունը՝ առաջին հայացքից անհասկանալի, արդարացնում է հակադիր արձագանքները Դոստուսկու՝ իրը ամենակարեկից և ամենադաժան գրողի մասին: Դոստուսկու սկենժագործությունը անսահման կարեկցանքով է համակված մարդու հանդեպ: Դոստուսկին խղճահարություն և կարեկցանք է ուսուցանում: Դրանում չկա նրան հավասար մեկը: Ոչ ոք այդքան խոցված չէր մարդկային անվերջանալի

փառապանքից: Դուսպուևսկո սիրով միշտ արյունահոսում էր: Նրան փրված էր ճանաչել գրաժանավայրը, ապրել գրաժանակիրների մեջ, և նա ամբողջ կյանքում մարդու համար միջնորդեց Ասպծու առջև: Անմեղ երեխաների գրառապանքների ամենից շար նրա խիղճն էին լոցում ու ցալեցնում: Եվ երեխայի արցունքի արդարացումը նրա համար թեոդիցիայի հնարավորություն դարձավ: Նա խորությամբ հասկացավ ըմբռսդությունն ընդդեմ աշխարհակարգի՝ գնված սարսափելի գրառապանքների գնով, զանցված անմեղ երեխաների արցունքով: Նա ամբողջովին ենում էր անսահման կարեկցանքից: Եվ Ալյօշայի շուրթերով նա պատրասխանում է Խվանի հարցին, թե արդյո՞ք կիամաձայներ «կառուցել մարդկային ճակարագրի շենքը՝ նպարակ ունենալով վերջում երջանկացնելու մարդկանց, ի վերջո խաղաղություն և հանգիստ գրալու նրանց», եթե «դրա համար անհրաժեշտորեն և անխուսափելիորեն պեսքը լիներ գանցել թեկուզ մի հարիկ պարիկ արարածի, ասենք հենց այն մանկիկին, որն իր փոքրիկ բռունքը կուրծքն էր ծնծում, և նրա չխարուցված արցունքների վրա հիմնել այդ շենքը»: «Ոչ, չէի համաձայնի»: Եվ ամբողջ կյանքում Դուսպուևսկին հարցը է, ինչպես Միքայայի երազում. «Այդ ինչո՞ւ են գրդմած կանգնել մայրեր, ինչո՞ւ են մարդիկ խեղճ, ինչո՞ւ է երեխան խեղճ, ինչո՞ւ է գրափառապանքը մերկ, ինչո՞ւ նրանք չեն գրկախատնվում, չեն համբուրվում, ինչո՞ւ ուրախ երգեք չեն երգում, ինչո՞ւ են այդպես սևացել նրանք սև դժբախտությունից, ինչո՞ւ չեն կերակրում երեխային»: Բայց Դուսպուևսկին ամենաքիչը կարող է անվանվել զգացմունքային, շողում և թուլացնող հումանիստը: Նա ոչ միայն կարեկցանք էր քարոզում, այլ նաև գրառապանք: Նա գրառապանքի կոչ է անում և հավաքում է գրառապանքի քավող ուժին: Մարդը պարասխանափու էակ է: Եվ մարդու գրառապանքն անմեղ չէ: Տառապանքը չարի հետք է կապված, իսկ չարը՝ ազարության: Այդ պատճառով է ազարությունը գրառապանքի գրառապանք: Ազարության ճանապարհը գրառապանքի ճանապարհն է: Եվ միշտ մարդուն գրառապանքից ազարելու գայթակղություն կա՝ նրան ազարությունից զրկող: Դուսպուևսկին ազարության ջարագովն է: Այդ պատճառով նա մարդուն առաջարկում է ընդունել գրառապանքն իրուն դրա անկասելի հերկանք: Դուսպուևսկու դաժանությունը կապված է այդ ազարության ամբողջական ընդունման հետք: Իրավամբ Դուսպուևսկու համար են պապշաճում Մեծ Հավաբարների խոսքերը. «Իու ընքրեցիր ամենայն ինչ, որ արդարագը է, առեղծվածային և անորոշ, ամենայն ինչ, որ վեր է մարդկանց ուժերից, ուստի և այնպես վարվեցիր, կարծես բոլորովին չէիր սիրում նրանց»: Այդ «արդարագը, առեղծվածայինն ու ամրոշը» կապված է մարդու իռացիոնալ ազարության հետք: Տառապանքների մեջ Դուսպուևսկին դրսնում է մարդու գերագույն արժանապարվության նշանը, ազար էակի նշանը: Տառապանքը չարիքի հերկանք է: Սակայն գրառապանքի մեջ է այրվում չարիքը: Իր երկերում Դուսպուևսկին մարդուն ուղեկցում է քավարանի և դժոխքի միջով: Նա հասցնում է նրան դրախտի նախամուգքին: Բայց դրախտը չի բացվում այն ուժով, ինչ՝ դժոխքը:

Ազարության ճանապարհը մարդուն հասցենց չարի ճանապարհին: Չարի ճանապարհը երկարում է մարդուն: Դուսպուևսկին երկարությունը պարկերելու հանճարեղ

վարպետ է: Նա հեղինակ է իրական գյուղերի, որոնք շամեցնում են հոգեբաններին և հոգեբույժներին: Մեծ արվեստագետին բացահայտվել էր ավելին, քան զիբունականներին: Անսահման և դադարկ ազագությունը ինքնականությանն անցնող ազագություն է, շնորհով չքրված և անաստվածյան ազագությունը չի կարող իրականացնել ընդունակության ակտը, այս դեպքի հակադիր կողմեր է ձգվում: Այդ պատճառով երկարվում է մարդու, նրա մեջ երկու «ես»-եր են ծասպորտում, անհարականությունը պառակվում է: Այդպիսի երկարված, պառակդրված մարդիկ են հոսպուսկու բոլոր հերոսները՝ և Ռասպոլնիկովը, և Միքայելօնինը, և Վերսիլովը, և Իվան Կարամազովը: Նրանք կորցրել են անհարականության ամբողջությունը, նրանք կարծեն թե երկակի կյանք են վարում: Երկարման սահմանում պետք է առանձնանա և անձնավորվի մարդու երկրորդ «ես»-ը, նրա ներքին չարք՝ իրեն սարանա: Երկարման այդ սահմանը հանճարեղ ուժով բացահայտված է Դոստուսկու կողմից Իվան Կարամազովի զառանցանքում, սարանայի հետ նրա զրոյցում: Իվանն ատում է սարանային: «Դու մարմնացնում ես իմ սեփական անձը, բայց միայն մեկ կողմն իմ անձի... Իմ մոքերն ու զգացմունքները, բայց ամենազգվածի ու հիմար մոքերը»: «Դու իմ եսն ես, իմ սեփական եսը, միայն թե ուրիշ մոռություն»: «Դու առանձին գոյություն չունես, դու իմ եսն ես, դու իմ անձն ես, ուրիշ ոչինչ: Անպետք մի բան ես դու, իմ ցնորքն ես»: Սարանան Դոստուսկու համար այլևս «կարմիր փայլաբակման մեջ կրակե թևերով շառաչերով ու փայլերով» հայդնվող զայթակդիչ ու հրապուրիչ դեռ չէ: Նա մոխրագույն ու գունիկ շննդիմնն է՝ սպասավորի հոգով, որը գենչում է մարմնավորվել «վաճառականի յոթիթանոց կնոջ» մեջ: Նա մարդուն դարանակալող անգոյության ոգին է: Չարի վերջին սահմանը՝ ճղճիմություն, ոչնչություն և անգոյություն: Չարը Իվան Կարամազովի մեջ սմերյակովյան սկիզբ ունի: Առողջ դապողությունը խանճարեց սարանային ընդունելու քրիստոսին և աղաղակելու «Օվսաննա»: Իվան Կարամազովի «Եվկիլիյան մրածողությունը» շաբի հարազար է այդ առողջ դապողությանը: «Եվկիլիյան մրածողության» փաստրակները հենց սարանայի փաստրակներին են: Այդ սարանան ներկա է Դոստուսկու բոլոր երկարված կերպարների մեջ, թեև նրանց մեջ ավելի քիչ է արքահայրվել, քան Իվանի: Երկարված մարդու երկրորդ «ես»-ը անգոյության ոգին է, նրա անհարականության կեցության կործանումը: Այդ երկրորդ «ես»-ի մեջ է բացահայտվում դադարկ, անբուժակ ազագությունը, անգոյության ազագությունը: «Սողումական» իդեալը «կյանքի ցնորք» է, անգոյության զայթակդություն: Եվ կապարյալ ցնորքի է վերածվում Սվիդրիկայլովը՝ վերջնականապես փրվելով սողոմական իդեալին: Նա իրեն անհարականություն այլևս գոյություն չունի: Մերկացվում է չարի իմաննենք ոչնչությունը: Երկարվածությունից փրկությունը միայն երկրորդ՝ շնորհեական ազագության մեջ է, ճշմարգության մեջ, քրիստոսի մեջ եղող ազագության: Որպեսզի վերջ գպնի երկարումը և չքի սարանայի ցնորքը, պետք է վերջնական ընդունակություն կարարել, իրական կեցության ընդունակություն: Դոստուսկու սրբեջագործության մեջ սերը նոյն պես երկարման միջով է անցնում: Նրանում է միննույն սկիզբը բացահայտվում:

ՈՌՈՒԵՐԵՆԻց ԹԱՐԳՄԱՆԵց Տ. ԳԵՎՈՐԳ ԱԲԴ. ՍԱՐՈՅԱՆԸ